(Պատրիկյանի տետրակը)

Միջահասակ, պնդակազմ, շատ ժիր տղամարդ էր, միշտ լավ հագնված, մոխրագույն շապոն մի քիչ ծուռ դրած, մատները լի մատանիներով, որոնցից մեկն առանձնապես հուրհրատին էր տալիս իր խոշոր ադամանդով: Կոշիկների վրայից հագնում էր սպիտակ գամաշներ՝ կողքից կոճկած: Ամառ-ձմեռ մոխրագույն ձեռնոցներ էր կրում, հագնում էր միայն ձախ ձեռքինը, իսկ աջը առանց հագնելու պահում էր ձեռքին, երևի խանգարում էին մատանիները: Ման էր գալիս արագ, հաստատուն քայլերով, կեռագլուխ ձեռնափայտը թևից կախած: Դեմքը կարծես բրոնզից էր ձուլված իր դեղնավուն գույնով և ծանր կնճիռներով, որոնք ծալ-ծալ նստած էին աչքերի տակ և բերանի այս ու այն կողմը: Իր այդ բրոնզյա դեմքով և մանավանդ աչքերի շատ սուր ու լուրջ հայացքով կորովի կամքի և համառ բնավորության տեր մարդու տպավորություն էր թողնում: Չգիտեմ ինչու, երբ պատահում էր, որ չէի կարողանում սենյակիս վարձը ժամանակին վճարել և այդ բանի համար նա կամ ինքն էր իջնում ինձ մոտ, կամ ինձ էր կանչում իր մոտ, ես պարզապես վախենում էի նրա այդ դեմքից և հայացքից, չնայելով, որ երբեք դուրս չէր գալիս քաղաքավարության սահմանից, թեև խոսում էր խիստ ու կտրուկ:

Քաղաքում հայտնի էր իր սապոնի գործարանով: Ուներ և մի քանի խոշոր տուն՝ խանութներով: Տներից մեկը մի ամբողջ հյուրանոց էր: Գործոն անդամ էր մի քանի խոշոր ակցիոներական ընկերությունների: Մի այդպիսի ընկերություն էլ ինքն էր հիմնել՝ Բաքվում նավթաբեր հողերի պեղումներ կատարելու համար:

Իր հարստության և անվան շնորհիվ հասարակական բոլոր ընտրությունների ժամանակ առաջին թեկնածուներից մեկն էր և հարում էր կադետական կուսակցության: Այսպիսով միաժամանակ քաղաքային դումայի իրավասու էր, համ բանկի դիրեկտոր, համ կլուբի ավագ, համ Բարեգործական ընկերության վարչության անդամ, համ դպրոցի հոգաբարձու, համ երեցփոխ, համ... չգիտեմ էլ ինչ: Եվ զարմանալին այն էր, որ համարյա ամեն տեղ էլ հասնում էր իր տոկուն եռանդի շնորհիվ:

Այն տունը, ուր ապրում էր Դավիթ Ֆոմիչը, բաղկացած էր երկու հարկից և գտնվում էր քաղաքի ամենաբանուկ, վաճառաշահ փողոցում: Ամբողջ վերին հարկը ծառաների սենյակներով, խոհանոցով, բաղնիքով, պահեստներով գտնվում էր տանտիրոջ ձեռքին, իսկ ներքին հարկը, փողոցում, մի շարք լայն ու բարձր խանութներ էին, որոնց վարձակալներն ապրում էին նույն տան ընդարձակ բակում, դրանք բոլորն էլ հարուստ վաճառականներ էին — մի՝ ակնավաճառ, մի կոնդիտեր, մի օպտիկ, մի դեղավաճառ և ամենաընտիր մրգեր ծախող մի բախկալ: Ամենախեղճ կենողներս այդ բակում ես էի, մի մանկաբարձուհի իր պառավ մոր հետ և բազմաթիվ

երեխաների տեր մի հրեա կին, որը բակի դարպասում սեղանի վրա զանազան երկաթեղեն էր ծախում — կողպեքներ, մկրատներ, դանակներ, մատնոցներ և այլն: Այս երեք խեղճ կենողներից ամենավատ սենյակն իմն էր — խոնավ, մութ, ընդհանուր արտաքնոցներին կպած: Ամոթ էլ էր այդ սենյակ անվանել, սկզբում դա եղել էր տանտիրոջ հավաբունը, ուր նա բազմաթիվ հավեր էր եղել պահելիս իր տան գործածության համար (ստամոքսի ինչ-որ հիվանդություն ունենալու պատճառով բժիշկներն արգելած են եղել նրան թռչունի մսից ուրիշ որևէ կենդանու միս ուտել). բայց որովհետև հավերի աղտոտությունից հոտելիս է եղել բակը, և կենողները շարունակ բողոքելիս են եղել այդ բանի դեմ, Դավիթ Ֆոմիչը հավերը տեղափոխել էր տան կտուրը, ուր նրանց համար հատուկ հավաբուն էր շինել տվել պատշաճ սարքավորումով, իսկ նախկին հավաբունը մի քիչ կարգի դնելով, սենյականման մի բանի էր վերածել, ուր և վիճակվել էր ինձ ապրել իմ նեղ օրերին:

Դավիթ Ֆոմիչի ընտանիքը մեծ չէր. ինքն էր, կինը, մի հատիկ տղան և աղջիկը: Տղային և աղջկան տնային կրթություն էր տալիս սկսած երաժշտությունից մինչև գիմնազիական դասընթացը: Ֆրանսուհի դաստիարակչուհին էլ հո ջոկ: Մի անգամ նույնիսկ փորձեց, որ նրանք հայերեն դասեր էլ առնեն, և դրա համար հրավիրեց ինձ, բայց տղան էլ, աղջիկն էլ հենց սկզբից բացեիբաց հրաժարվեցին, ասելով, որ հայերենը շատ դժվար լեզու է, և ինչի է պետք այդ «կռոյի լեզուն» (տան մեջ նրանց գործածական լեզուն ռուսերենն էր և ֆրանսերենը):

Աղջիկը բավական տգեղ արարած էր, հոր պես դեղնավուն և, ըստ երևույթին, հիվանդոտ, բժիշկը շաբաթը երկու անգամ կանոնավորապես այցելում էր նրան: Ծնողների առանձին հոգացողության տակ էր նրա լսելիքը, եթե պատահում էր, որ փողոցային որևէ թափառական մի երաժիշտ իր արգանով կամ հարմոնով, ջութակով կամ շվիով մտնում էր տան բակը մի քանի կոպեկ հավաքելու համար, իսկույն ծառաների միջոցով դուրս էին քշում նրան, որ աղջկա երաժշտական լսելիքը չփչանա այդ «վայրենի» ձայներից:

Տղան, մի շատ գեղեցիկ, աշխույժ ու չարաճճի պատանի, բոլորովին նման չէր ոչ հորը, ոչ մորը և ոչ էլ մանավանդ քրոջը և, երևի այդ պատճառով, նրանց առանձին սիրո և գուրգուրանքի առարկան էր: Նրան շատ էին երես տվել, և նա տան մեջ ինչ օյինբազություններ ասես չէր անում: Դեռևս քսան տարեկան չեղած, գիմնազիական դասընթացն արդեն ավարտած էր համարում իրեն և այլևս չէր ուզում սովորել: Գրպանը միշտ լիքն էր լինում փողով, և նա ծախսում էր քեֆն ուզածին պես: Մի քանի անգամ բռնվել էր խոշոր սկանդալների մեջ և միշտ էլ անպատիժ մնացել հոր շնորհիվ: Ման էր գալիս գլխարկը ծոծրակին դրած և մազերի՝ գեղեցիկ փայլուն գանգուրները ճակատին ցրիվ տված:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ Դավիթ Ֆոմիչը, իբրև հարուստ մարդ, ապրում էր, ինչպես ասում են, լեն ու բոլ: Ամեն ամառ ընտանիքով քոչում էր արտասահման և ամեն անգամ վերադարձին այնտեղից բերում էր այնպիսի զարմանահրաշ բաներ, որ տեսնողը մնում էր բերանը բաց: Դրանք մեծ մասամբ ոչինչ բաներ էին — սեղանի վրա կամ բուխարու գլխին դնելիք զարդարանքներ, տարօրինակ ձևի և կոնստրուկցիայի ժամացույցներ, ալբոմներ, ծաղկամաններ և այլն: Մի անգամ էլ բերեց մի՝ շատ գեղեցիկ թեթև ավտոմոբիլ հատկապես իր և ընտանիքի անդամների զբոսանքի համար: Բայց ամենից շլացուցիչը Լյուդվիկոս չգիտեմ ո՞րերորդի ոճով պատրաստված կահավորանքն էր, որ ապսպրել էր Փարիզից իր դահլիճի համար: Պարծանքով էր պատմում, որ միմիայն սեղանը, գահավորակը և երկու բազկաթոռը իր վրա նստել էր տասը հազար ռուբլի: Շատ էր սիրում իր բարեկամների շրջանում պատմել հետևյալ դեպքն իրենց փարիզյան այցելություններից.

— Մի երեկո նստած ենք Բոլլոնյան անտառում: Դե, հայտնի է, թե ինչ հասարակություն է զբոսանքի ելնում այդ անտառը, ամբողջ շիք ու հրաշալիք, Կինս նայեց, նայեց, մի խոր հոգոց քաշեց և ասաց, «Է՛հ, մե՛նք էլ կասենք ապրում ենք, սրա՛նք էլ»:

Եկավ աշխարհասասան պատերազմը, և միակ վնասը, որ հասցրեց Դավիթ Ֆոմիչին, այդ այն էր, որ զինվորական վարչությունը գրավեց նրա ավտոմոբիլը իր պետքերի համար: Այդ բանը մեծ ցավ պատճառեց նրան, բայց ի՞նչ կարող էր անել: Վախ կար, որ որդուն կարող էին զինվոր տանել և քշել դեպի սպանդանոց, բայց դեմը կարողացավ առնել, շտապեց որդուն յունկերական դպրոցը տալ և բանն այնպես սարքեց, որ նա մինչև պատերազմի վերջն էլ մնաց թիկունքում: Իսկ ինքը, իբրև «անվանի՝ հասարակական գործիչ», մի ինչ-որ կարևոր պաշտոնով մտավ Քաղաքների Միության մեջ և իրեն միայն հայտնի միջոցներով ձեռքերը լավ տաքացրեց: Բայց երբ թուրքերը Սարիղամիշ — Արդահանի ճակատը ճեղքելով

սպառնում էին բռնել Թիֆլիսի ճանապարհը, Դավիթ Ֆոմիչն առաջիններից մեկն էր, որ Նիկոլայ II-ի հետևից իր ընտանիքով փախավ դեպի հյուսիս, որտեղից վերադարձավ այն ժամանակ միայն, երբ թուրքերը ետ շպրտվեցին դեպի Էրզրում, և Կովկասյան ճակատը միանգամայն ապահովվեց:

Թուրքերի պարտությունը այնքան էր ոգևորել Դավիթ Ֆոմիչին, որ նա սկսեց եռանդուն մասնակցություն ցույց տալ հայկական կամավորական խմբեր կազմակերպելուն և «Մի՛ հայ — մի ոսկի» ֆոնդի հանգանակության գործին: Եվ երբ հայերին միանգամայն հիմարացնելու համար Անդրանիկին գեներալ-մայորի աստիճան շնորհվեց, Դավիթ Ֆոմիչը մի փառավոր ընթրիք պատրաստեց իր տանը նրա պատվին:

Կովկասյան ճակատում ռուսական բանակի իրար հետևից տարած հաղթություններն առհասարակ Դավիթ Ֆոմիչը վերագրում էր հայ կամավորական խմբերին, բռնվել էր թունդ ազգասիրությամբ և ման էր գալիս այնպես ուռած-փքված, որ ամեն անգամ, քանի նայում էի նրան, միտս էին գալիս Կռիլովի վարից վերադարձող եզան պոզին նստած ճանճի պարծենկոտ խոսքերը՝ «Մենք էլ վարեցինք»:

Այնուհետև եկավ փետրվարյան հեղափոխությունը և թեև մի քիչ սառը ջուր մաղեց նրա գլխին, բայց և այնպես մի մազ անգամ չպակասեցրեց Դավիթ Ֆոմիչի գլխից: Այն ժամանակ, երբ մենք սիմինդրի կամ կորեկի հաց անգամ հազիվ էինք ձեռք գցում, Դավիթ Ֆոմիչի ընտանիքը ֆրանսիական բուլկիներ էր անուշ անում:

Բայց ահա լսվեց Հոկտեմբերի ահազանգը Պետրոգրադից, Դավիթ Ֆոմիչն առաջին անգամ բնազդական սարսուռ զգաց ահարկու գալիքի հանդեպ: Այդ գալիքի նախադուռը հանդիսացավ կովկասյան ճակատի մերկացումը և թուրքերի առաջխաղացումը: Դավիթ Ֆոմիչը ահ ու սարսափով բռնված իր ընտանիքի հետ նորից փախավ Հյուսիսային Կովկաս: Այնտեղից վերադարձավ այն ժամանակ, երբ անգլիացիները քշել էին թուրքերին ու գերմանացիներին, պինդ նստել Անդրկովկասում իրենց անվարտիք շոտլանդացիներով, հնդկական խուրմայով և ահագին ջորիներով, և զբաղվում էին «բաժանիր, որ տիրես» քաղաքականությամբ: Անգլիացիների տիրապետության ժամանակ էլ Դավիթ Ֆոմիչը վատ չէր զգում իրեն: Նույնիսկ բարեկամացել էր նրանցից մի քանի բարձրաստիճան զինվորականների հետ, որոնց շուտ-շուտ հյուրասիրում էր իր տանը:

Կար մի մոմենտ, որ նա հույս ուներ, թե շուտով կիրավիրվի դաշնակցական Հայաստան՝ ֆինանսների մինիստրի պաշտոնով, երբ զարմանքով իմացավ, որ Հոկտեմբերը հյուսիսից գալով՝ եկել նստել է Բաքու: Հետո լուր եկավ, թե նա Երևանումն է և շուտով գալու է Թիֆլիս: Եվ այս բոլորը կատարվեց այնքան անսպասելի կերպով և այնպիսի գլխապտույտ արագությամբ, որ Դավիթ Ֆոմիչը ժամանակ չունեցավ իր ի՛նչ անելիքը որոշելու: Կարողացավ միայն կնոջը, աղջկան և տղային անգլիացիների հետ ճամփել արտասահման, իսկ ինքը մնաց, որպեսզի կարգագրի իր գործերը և հարմար րոպեին ծլկի նրանց հետևից:

Այդ հարմար րոպեն պետք է լիներ բոլշևիկների Թիֆլիս մտնելու նախորդ օրը: Ինչպես հետո ինքը Դավիթ Ֆոմիչն էր՝ պատմում ինձ, իր բարեկամ անգլիացիներից մեկը, որ մնացել էր իբրև մենշևիկների խորհրդատու, խոստացել էր այդ օրը վերցնելու նրան իր հետ, բայց խուճապի մատնված կամ մոռացել էր նրան, կամ ժամանակ չէր ունեցել նրան իմաց տալու և մենշևիկների հետ փախել էր խոստացած օրվանից երկու օր առաջ, որովհետև նրա հաշիվները բոլշևիկների Թիֆլիս մտնելու օրվա մասին սխալ էին դուրս եկել:

Այսպիսով Դավիթ Ֆոմիչը, հույսը անգլիացու վրա դրած, գիշերը հանգիստ քնելուց հետո, փետրվարյան մի ցուրտ առավոտ վեր կացավ տեսավ Հոկտեմբերն արդեն եկել նստել է Թիֆլիսում, և ոչ անգլիացի կա, ոչ մենշևիկ: Այժմ նա նմանում էր ականատ ընկած մկան, որ շատ դես-դեն ընկնելուց և դունչը երկաթալար ցանցերին արնոտելուց հետո տեսնելով, որ ազատվելու հնար չկա, տապ է անում և աչքերը պլշած սպասում իր անխուսափելի վախճանին:

Իսկ այդ վախճանը մոտենում էր, սկզբում թեև դանդաղ ու երերուն, բայց հետզհետե ավելի ու ավելի արագ և հաստատուն քայլերով:

Ամենից առաջ քաղաքային դուման, բանկը, կլուբը, ակցիոներական ընկերությունները — այդ բոլորը հօդս ցնդեցին, ինչպես երազներ, և Դավիթ Ֆոմիչը զգաց իրեն ինչպես ջրից ցամաք նետված ձուկը: Հետո աստիճանաբար եկան հօդս ցնդելու նրա անձնական սեփականությունները. նախ ազգայնացվեց սապոնի գործարանը, հետո՝ հյուրանոցը, հետո մի տունը, հետո՝ երկրորդը, երրորդ տունը և ամենից վերջը հերթը հասավ այն տանը, ուր ապրում էր ինքը և մենք — բակի կենողներս:

Այս տան վրա նա պետք է որ ամենից ավելի դողալիս լիներ, որովհետև այստեղ իր բնակարանի միմիայն կահավորանքը մի ահագին հարստություն էր, որի գոնե մի մասը չէր կարողացել կամ չէր ուզեցել որևէ տեղ պարտկել: Սենյակներից մեկի պատի մեջ պարտկել էր միայն տան մեջ ունեցած ամենաթանկագին մանր-մունր իրեղենները — ոսկեղենը և արծաթեղենը, որը ինչ-ինչ պատճառներով չէր կարողացել ընտանիքի հետ ճամփել արտասահման: Այս բանը բացվեց նրա մահից հետո տան մեջ կատարված վերանորոգման ժամանակ:

Սապոնի գործարանը, հյուրանոցը, մյուս տները ազգայնացվելուց հետո ուզեց փրկել գեթ այս վերջին տունը և ուրիշ ճար չգտնելով՝ դիմեց գլուխը հողի մեջ թաղող ջայլամի «խորամանկության», դրա համար ամենից առաջ պոկեց իր շքադռան վրա փակցված երկաթե տախտակը, որի վրա ոսկե տառերով փորագրված էր իր անուն-ազգանունը, հետո քանդեց այդ դռան էլեկտրական զանգակի կոճակը, դուռն էլ պինդ փակեց և ներս ու դուրս էր անում բակի դռնից: Դեպի փողոց նայող բոլոր պատուհանների տախտակե փեղկերը գիշեր-ցերեկ փակ էր պահում: Արձակել էր տան բոլոր ծառայողներին: Ցերեկը երբեք տանը չէր մնում, առավոտյան վաղ դուրս էր գալիս, գնում հայտնի չէ ուր և վերադառնում ուշ գիշերին: Առանց այն էլ բրոնզի գույն ունենալով, նրա դեմքը միանգամայն դեղնել էր, կնճիռները փափկել կախ էին ընկել, շապոն այլևս ծուռ չէր դնում, այլ աչքերի վրա վար թողած, իսկ մատանիները չքացել էին մատներից, բայց ձեռնոցները և ձեռնափայտ կրում էր առաջվա պես: Առաջ էլի պատահում էր, որ բակի կենողների կամ ծանոթների հետ հանդիպած ժամանակ կանգնում խոսում էր, բայց այժմ հազիվ միայն լուռ բարևում էր և անցնում գնում:

Վերջ ի վերջո այդ տունն էլ ազգայնացվեց ընդհանուր կարգով, և Դավիթ Ֆոմիչի ընդարձակ բնակարանում եկավ տեղավորվեց մի՝ ինչ-որ հիմնարկություն: Գրավվեց բնակարանի ամբողջ կահավորանքը, այդ թվում նաև լյուդվիկոսյան սեղանն ու գահավորակները: Հետագայում, երբ Դավիթ Ֆոմիչն արդեն հաշտվել էր իր դրության հետ և իր նախկին հարստությունից ու պատվից զրկված՝ բարեկամացել ինձ հետ, դառնությամբ գանգատվելով ասում էր, թե ճիշտ է, սկզբում շատ էր մտահոգվում իր բնակարանի համար, բայց չէր կարծում, թե բնակարանի հետ կահավորանքն էլ կգրավեն:

— Այլապես, — ավելացնում էր նա, — որ գիտենայի, թե կահավորանքս էլ պիտի գրավեն, հերները կանիծեի, մի մազ անգամ չէի թողնի, որ աչքները կոխեն: Աղքատ

ազգականներ շատ ունեմ, բաժան-բաժան կանեի, ամեն մեկին մի բան կտայի, ձեզ կտայի, դռնապանիս կտայի, մի խոսքով շուն ու գելի կտայի, բայց չէի թողնի, որ նրանք գան տիրանան իմ ընտանեկան պետքերի համար իմ հատուկ ճաշակով պատրաստել տված իրեղեններին:

Դավիթ Ֆոմիչին թույլ տվին իր պետքերի համար վերցնել ամենաանհրաժեշտ իրեղեններն ու հագուստեղենը և հատկացրին նրան խոհանոցին կից գտնված մի սենյակ, ուր առաջ գիշերում էին նրա խոհարարն ու ծառաները:

Սկզբում Դավիթ Ֆոմիչն այս հարվածը տարավ զարմանալի տոկունությամբ ու մինչև սրտի խորքը վիրավորված մարդու լուռ հպարտությամբ: Առաջվա պես ամեն առավոտ գնում էր ուր-որ և վերադառնում ուշ գիշերին: Ոչ ոքի հետ ոչ խոսում էր, ոչ էլ՝ բարևում: Նրա սենյակին կից խոհանոցում տեղավորված էին հիմնարկության սպասավորներից երկու հոգի՝ կուրիերը և սրա կինը, որը մաքրում էր սենյակները և հիմնարկության ծառայողների համար թեյ պատրաստում: Երևում էր, որ Դավիթ Ֆոմիչը տանել չէր կարողանում նրանց հարևանությունը և ավելի այդ հարևանությունից էր, որ փախչում էր:

Այնուհետև մինչև այս նախավերջին տարին շատ փոփոխություններ կատարվեցին այդ տան մեջ. մի հիմնարկության տեղ եկավ մի ուրիշը, սա էլ գնաց, տունը վերջնականապես դարձավ ժակտ, ներքին խանութներում տեղավորվեց բանկոոպը, մասնավոր վաճառականները հեռացվեցին իրենց բնակարաններից, նրանց տեղ եկան բանվորներ, ի միջի այլոց և իրեն՝ Դավիթ Ֆոմիչի նախկին սապոնի գործարանի մի քանի բանվորներ իրենց ընտանիքներով, վերևը բնակություն հաստատեցին խորհրդային պատասխանատու պաշտոնյաներ, իսկ իրեն՝ Դավիթ Ֆոմիչին, վերևից քշեցին և բերին տեղավորեցին իմ նախկին սենյակում կամ, ուրիշ խոսքով ասած, իրեն իսկ նախկին հավաբնում, որտեղից ես ամուսնանալու պատճառով վաղուց դուրս էի եկել և բնակվում էի նույն բակում դատարկված մի ավելի հարմար բնակարանում:

Այս հարվածն արդեն չկարողացավ տանել Դավիթ Ֆոմիչը: Ինչպես որ գազով լի շշի խցանը հանես, և գազը ֆշշալով ու թշշալով դուրս պրծնի հանկարծ, այնպես էլ Դավիթ Ֆոմիչի գոռոզ սրտի մեջ մինչև այդ հավաքված վիրավորանքի և նվաստացման թույնը արտավիժեց միանգամից: Ծայր աստիճան կատաղած, փրփուրը բերանին, արնակալ աչքերը շուռումուռ տալով, սկսեց ոտները գետնովը տալ, սպառնալ, թե ցույց կտա նրանց, կգնա կգանգատվի ուր պետք է, բայց նրա սպառնալիքների վրա միայն ծիծաղեցին և հասկացրին նրան, որ հիմա ոչ պրիստավ կա, ոչ գուբերնատոր, և ուր էլ որ գնա գանգատվելու, ամեն տեղ էլ իր դիմաց կտեսնի իրենց նման բանվորների, որոնք նույնպես կծիծաղեն իր վրա. ավելի լավ է սուս անի և հանգիստ նստի իր տեղը, թե որ չի ուզում այդ սենյակից էլ զրկվել:

Այդ խրատից հետո Դավիթ Ֆոմիչը թեև սուս արավ, բայց հանգիստ չնստեց իր տեղը: Մի քանի օր կորած էր, ոչ ցերեկն էր երևում, ոչ՝ գիշերը: Ո՞րտեղ էր լինում, ի՞նչ էր անում — հայտնի չէ: Միայն մի առավոտ տեսնեմ եկել փսփսում է իր նախկին հավաբնում: Իմ հարցին, թե ի՞նչ է անում այնտեղ Դավիթ Ֆոմիչը, դռնապան Պողոսը ծիծաղելով պատասխանեց.

— Ի՞նչ պըտի անի, տեղավորում ա իր հափուռ-չփուռը: Ասած ա՝ կկակղի — կուտի:

Այժմ նա, ինչպես ասում են, միանգամից կոտրվել էր, ծերացել, մեջքից կորացել: Սանձն արդեն շատ էին պինդ քաշել, և նա այլևս չէր կարողանում առաջվա պես գլուխը բարձր պահել: Դեղնավուն դեմքը հետզհետե սևանում էր, միշտ մաքուր սափրած երեսը ծածկվում էր սևը սպիտակի հետ խառն մազի փշերով, առաջվա

միշտ անբիծ, միշտ արդուկած հագուստը ճմրթվում էր, ծալծլվում և ծածկվում վրան թափված կերակրի փոշակալ բծերով, գեղեցիկ շապոյին հրաժեշտ էր տվել և շատ հասարակ գդակ էր դնում գլխին:

Երբեմն գիշերները նրա պատուհանի մոտով անցնելիս տեսնում էի նրան սեղանի մոտ ակնոցը քթին ինչ-որ գրելիս: Երևի նամակներ էր գրում արտասահման իր ընտանիքին: Իսկ շատ հաճախ նրան տեսնում էի հասարակաց այգու մի խուլ անկյունում իր պես խունացած նախկին մարդկանց հետ նստած խաղաղ զրույց անելիս: Այգու այդ անկյունը նրանց հավաքատեղին էր, որ նրանք ամեն օր միևնույն ժամերին գալիս նստում էին միշտ միևնույն նստարանների վրա իրար դիմաց՝ խոսելու անցած-գնացած օրերի և գուշակություններ անելու եկած ու գալիք օրերի մասին: Նրանց մեջ կային մի նախկին գեներալ իր երբեմնի կարմրաստառ շինելով, առանց ուսադիրների, մի գնդապետ քաղաքացիական էժանագին վերարկուով, մի չինովնիկ իր չինովնիկական հնամյա գլխարկով առանց կոկարդի, որի տեղը մի ծակ էր և ծակի շուրջը մի սպիտակ շրջան խունացած մահուդի կապույտ ֆոնի վրա: Այնուհետև այդ անտիկների շրջանը կազմում էին նախկին առևտրական խոշոր տան մի ներկայացուցիչ, մի նոտարիուս, մի դատավոր, բորսային մի մակլեր և նույնիսկ երբեմն-երբեմն էլ նախկին հարուստ ծխերի տեր մի՝ տերտեր, որ ֆարաջան հանել վերարկու էր հագել, բայց շարունակում էր կրել իր տերտերական մորուքը և ամեն գերեզմանօրհնեքին վազում էր գերեզմանատուն գերեզմաններ օրհնելու, պահանջված դեպքումն էլ, որ շատ քիչ էր պատահում, մեռել թաղելու:

Մի անգամ Դավիթ Ֆոմիչը դռնապան Պողոսի բերանով թել ու ասեղ էր խնդրել կնոջից: Երբ Պողոսին հարցրի, թե Դավիթ Ֆոմիչը ի՞նչ էր անում թել ու ասեղը, պատասխանեց, թե ուզում է վարտիքի կոճակը կարել:

— Ես թելեցի ասեղը, — ասաց նա, — աչքերը կտրում չի: Լափ գնացել ա ձեռքից: Հա՛խն ա, — ավելացրեց Պողոսը սրտանց, — խի՞ էր օղլուշաղը զագրանիցա ճամփում, բալշևիկնին հու ուտելու չէի՞ն նրանց. որտեղ ինքը, ընտեղ էլ նրանք: Հըմի լավ ա՞, որ մին կոճակ կարող էլ չունի, բայղուշի պես մենակ նստած ա մնացել տանը: Փիս մարդ էր, փիս էլ վերջացնում ա իր օրերը: Քսան տարի իր դռան շունն էր արել ինձ, տվածը մի զադ չէր, ինչքան խնդրում ի, որ մին օթախ տա, օղլուշաղս հանեմ պադվալից՝ մեջը կենան, արևի լիս տեսնան, տվավ ոչ, թե՝ քու ըրեխանց ղալմաղալի գլուխ չունեմ: Հըմի՝ լավ իրան հանեցին բերին մկան ծակուռը կոխեցին: Դե թող հըմի գնա մեզպեսների ղադրը իմանա: Համա ի՞նչ, անցածը անցած ա. հըմի որ տեսնում եմ նրան էն հավաբնում կուչ եկած, խեղճս գալիս ա: Մին-մին վախտ հաց ա ուզում, տալիս եմ: Հացի կնիժկա չունի:

— Մի՞թե մինչև անգամ հացի փող չունի, — զարմացա ես:

— Է՛, ի՞նչ ես ասում, վարժապետ ջան. ունի, ո՞նց կարա չունենա: Ասած ա՝ ուղտը ինչքան էլ որ սատկի, կաշին էլի մի իշաբեռ դուրս կգա:

— Բա էդ ո՞նց է, որ հացը քեզնից է ուզում:

— Որ ասի, թե տեսեք, բալշևիկնին ինչ օրի են հասցրել խեղճ հալևորիս: Շատ զալում քավթառ ա, որ ասիլ չի ուզի:

Դավիթ Ֆոմիչը կամաց-կամաց նշաններ էր ցույց տալիս ինձ մոտենալու, այն Դավիթ Ֆոմիչը, որ առաջ հազիվ էր լայեղ անում բարև տալ աղքատ վարժապետիս: Սկզբում, առավելապես ցուրտ և անձրևային եղանակներին, երբ տեղ չուներ գնալու, երեկոները մտնում էր ինձ մոտ տաքանալու և ժամանակ անցկացնելու համար: Մնում էր ժամերով, գանգատվում էր, թե տանջվում է անքնությունից, հարցնում էր,

թե արտասահմանի հետ առհասարակ պոստային ազատ հաղորդակցություն կա՞, թե ոչ: Կինս շատ էր խղճում նրան և չէր խնայում թեյով կամ տանը գտնված որևէ բանով հյուրասիրելու ի մեծ դժգոհություն կոմերիտ տղայիս, որը տանել չէր կարողանում նրա ներկայությունը: Ասենք տղաս նրա եկած, ժամանակ մեծ մասամբ տանը չէր լինում, որովհետև բանֆակում դասերը տեղի էին ունենում երեկոները:

Այնուհետև Դավիթ Ֆոմիչն իր այցելությունները ձանձրացնելու չափ սովորություն դարձրեց և համարյա ամեն օր մեր հյուրն էր, այնպես որ կինս արդեն սկսել էր քրթմնջալ: «Ցավ դառա՞վ մեր գլխին», — ասում էր նա, բայց և այնպես էլի շարունակում էր հյուրասիրել:

Դավիթ Ֆոմիչը մեր տանը շատ զգուշաբար էր խոսում բոլշևիկների մասին, որովհետև գիտեր, որ մեծ որդիս հենց իր բոլշևիկ լինելու պատճառով էր զոհվել մայիսյան ապստամբության ժամանակ, մյուս որդիս նույնպես բոլշևիկ և կուսակցական հրահանգիչ էր գավառում, իսկ փոքր տղաս– կոմերիտ, թեև սրան բանի տեղ չէր դնում և երեխա էր համարում: Բայց հենց որ հին ցավերը նորոգվում էին, էլ չէր կարողանում զսպել իրեն, սկսում էր հայհոյել բոլշևիկներին էլ, խորհրդային իշխանությանն էլ և սրանց հայհոյելիս առանձին կատաղությամբ գերեզմաններից հանում շների բերանն էր գցում բոլոր ցարերին և առանձնապես Նիկոլայ II-ին, որը չէր լսել կադետների խորհուրդը, ժամանակին եվրոպական պառլամենտական կարգեր և պատասխանատու մինիստրություն չէր մտցրել, ցրել էր պետական դուման և այլն:

— Եթե նա ժամանակին կատարեր կադետների պահանջը, — ասում էր Դավիթ Ֆոմիչը, — ոչ հեղափոխություն կլիներ, ոչ մենշևիկ ու բոլշևիկ, ոչ սավետ ու մավետ, ոչ ժակտ ու մակտ, ինքն էլ շանսատակ չէր լինի:

Ժակտ անունը մանավանդ սոսկալի ատելությամբ էր արտասանում Դավիթ Ֆոմիչը: Նրա համարյա ամենօրյա գանգատը ժակտից «իր» տան համար էր. ասում էր, թե տունը օրը օրին քայքայվում է, կտուրը կաթում է, անձրևի խողովակները ժանգից ծակծկվել են, մի քանիսը թափվել, ջրերը պատերի վրայից անցնելով թափում են ծեփերը և պատերը խոնավացնում, կենողներն անկարգ, բիրտ մարդիկ են, ջարդում են պատուհանների ապակիները, թիթեղե վառարաններ են դրել սենյակներում, ծխնելույզները դուրս են հանել պատուհաններից, պատի կառնիզները սևացրել ծխի ծեփով ծածկել և այլն, և այլն, և այս բոլորի վրա ժակտը ոչ մի ուշադրություն չի դարձնում:

— Լավ, ձե՞զ ինչ, Դավիթ Ֆոմիչ, — ասացի ես մի անգամ, երբ նորից սկսել էր գանգատվել այս մասին, — տունը խո ձերը չէ այլևս:

Նայեց ինձ աչքերի այնպիսի մի ցոլքով, որպիսին տեսել էի նրա աչքերի մեջ անցյալներում իր լավ ժամանակ, երբ որևէ բանի վրա կատաղած էր լինում:

— Տունը իմս էր և իմս էլ կլինի, — ասաց նա ծանր — ծանր, հատկապես շեշտելով «իմս» բառը և ամեն մի «իմս»-ի հետ բռունցքը խփելով սեղանին:

— Այդ ինչպե՞ս, Դավիթ Ֆոմիչ:

— Այդ ե՞ս գիտեմ, թե ինչպես, — նորից շեշտեց «ես» բառը մի առանձին խորհրդավորությամբ:

— Եվ ե՞րբ, Դավիթ Ֆոմիչ, — շարունակեցի հարցուփորձս: Ինձ արդեն զվարճություն էին պատճառում նրա անվերապահ պնդումները:

— Երբ որ. երբը կգա, — պատասխանեց նույն խորհրդավորությամբ:

— Ե՞րբ կգա այդ երբը:

— Շուտո՛վ, շուտո՛վ: Որովհետև մի երկիր չի կարելի երկար ժամանակ կառավարել ավազակներով:

Այս անգամ «ավազակներ» բառը շեշտեց մի առանձին կրքոտությամբ և, ըստ երևույթին, ուզում էր շարունակել, երբ հանկարծ հարևան սենյակիս դուռը բացվեց արտասովոր շրխկոցով և ոչ թե մտավ, այլ մի տեսակ ներս նետվեց կոմերիտ տղաս: Ինչպես երևում էր, նա տանն էր եղել, որ ես չգիտեի, և հարևան սենյակից լսելիս էր եղել մեր խոսակցությունը: Մտնելու ձևը որ տեսա և նայեցի աչքերին, իսկույն հասկացա, որ նրան վառել էր Դավիթ Ֆոմիչի արտասանած «ավազակներ» բառը:

Եվ չսխալվեցի:

Նա ուղղակի գնաց կանգնեց Դավիթ Ֆոմիչի առջև և հարցրեց.

— Ովքե՞ր են այդ «ավազակները»:

Նրա ձայնի մեջ զսպված վրդովմունքի և սպառնալից մարտակոչի շեշտեր զրնգացին:

Դավիթ Ֆոմիչը հոնքերի տակից մի սաստող հայացք ձգեց նրա վրա և ասաց հանգիստ ձայնով,

— Քեզ հետ չեն խոսում, դու դեռ երեխա ես:

Տղաս տեղնուտեղը կրակ կտրեց մեկեն: Ես մինչև անգամ վախեցա, թե կարող է խփել ծերունուն:

— Ո՛չ ի՛նձ հետ խոսեցեք, ի՛նձ հետ, — աղաղակեց նա իր պատանեկան ձայնի զիլ հնչյուններով: — Նստել հորս հետ եք խոսում, որը քիչ է մնում համաձայնի ձեզ հետ: Ի՛նձ հետ, մե՛զ հետ խոսեցեք, մեզ հետ, որովհետև մե՛նք ենք, մե՛նք, ձեր կարծած երեխաներս ենք, որ հաշիվ ենք պահանջում ձեզնից, և մե՛նք ենք, որ պատժում ենք ձեզ ու պիտի շարունակենք պատժել այնքան, մինչև որ միանգամայն սրբենք ձեր սերունդն ու դասակարգը երկրի երեսից: Ավազակներ ասում եք: Ձեզնից ավելի մե՛ծ ավազակներ, որ դարեր շարունակ քամում, ծծում էիք բանվորների արյուն-քրտինքի վաստակը, ձեզ համար պալատներ շինում, շռայլ ու ցոփ կյանք վարում և անպետք ու անառակ մի սերունդ արտադրում, որ շարունակի ձեր գարշելի գործը:

Մի կողմից ես, մյուս կողմից կինս, որ ներս էր վազել նրա աղաղակների վրա, իզուր աշխատում էինք նրան հանգստացնել և դուրս տանել, նա թևերով դես-դեն էր հրում մեզ և, զայրույթից ու վրդովմունքից ծայր աստիճան տաքացած, շարունակում էր իր ֆիլիպիկները կոմերիտական անվախ խիզախությամբ ծանր մուրճի հարվածների պես թրխկացնել բուրժուազիայի գլխին՝ հանձին Դավիթ Ֆոմիչի:

Վերջապես կնոջս մի կերպ հաջողվեց համարյա զոռով նրա թևից բռնած՝ քարշ տալով տանել նրան մյուս սենյակը և դուռը փակել:

Ես նայեցի Դավիթ Ֆոմիչին: Աչքերը, անմիտ բացած, հառել էր դեմքիս, գլուխը երերվում էր սաստիկ: Մարմինը վեր ու վեր էր ցնցվում և հանկարծ ցած ընկնում, քարանում: Ծանր լռության մեջ մի քանի րոպե այդպես մնալուց հետո ուզեց վեր կենալ, չկարողացավ մի անգամից, հետո երկու ձեռքով հենվեց սեղանին, ծանրացած

մարմինը հազիվ վեր բարձրացրեց և պառավական երերուն քայլերով դուրս գնաց, առանց մի խոսք արտասանելու:

Այն գնալն էր, որ գնաց, էլ երբեք ոտք չդրեց մեր տունը: Երբ որդուս հանդիմանեցի իր վարմունքի համար, ասելով, որ ընկածին չեն ծեծում, նա երեսովս տվավ, թե ես հաշտվողական եմ, թե այդպիսիներին ոչ միայն պիտի ծեծել, այլև անխնա ոտի տակ տրորել, ճխլել միանգամայն, որ ընկած տեղից այլևս երբեք վեր չկենան:

— Այլապես, թե որ վեր կացան, հայրիկ, վա՛յ քեզ ու մեզ և նրանց, որոնք հազիվ են ազատվել նրանց ճիրաններից, — ավելացրեց նա:

Այս դեպքից հետո անցել է մի քանի ամիս: Այս մի քանի ամսվա ընթացքում շատ քիչ էր պատահում, որ նույնիսկ բակում հանդիպեի Դավիթ Ֆոմիչին: Հանդիպելիս էլ չտեսնելուն էր տալիս և անցնում գնում: Շատ թունդ էր խռովել:

Մի օր, երբ ճաշին տուն դարձա, կինս ասաց, թե մի քանի ժամ առաջ Դավիթ Ֆոմիչին հանկարծ կաթված էր խփել և հենց նոր նրան հիվանդանոց են տարել շտապ օգնության կառքով:

Պատճառն անշուշտ եղել էր այդ օրվա թերթերում տպված գործակալության մի հեռագիրը Մոսկվայից, որ ես կարդացել էի դեռևս այդ առավոտ: Հեռագիրը վերաբերում էր Պետքաղվարչության ձեռքն ընկած տեռորիստական-լրտեսական մի խմբի դատավարության: Այդ խմբի մարդիկ, որոնք զանազան ժամանակներում կեղծ անցագրերով անցած են եղել սահմանը, ուղարկված են եղել արտասահմանյան ռուս մոնարխիստական մի կազմակերպության կողմից՝ տեռորներ կատարելու և լրտեսելու համար: Դատվելուց հետո նրանք դատապարտվել էին սոցիալական պաշտպանության գերագույն միջոցի — գնդակահարության: Հեռագրի մեջ մեկ առ մեկ հիշված էին գնդակահարվածների անուն-ազգանունները և ով լինելը:

Դրանց թվումն էր և Դավիթ Ֆոմիչի նախկին յունկեր տղան:

Այդ հեռագիրը պարունակող լրագրի համարը գտել էին Դավիթ Ֆոմիչի ձեռքին կաթված ստացած միջոցին:

Ճաշին մեր խոսակցության առարկան այդ դեպքն էր:

— Տեսար, հայրիկ, ո՛ւմ էիր դու պաշտպանում, — նորից երեսովս տվավ կոմերիտ տղաս:

Ես ծիծաղեցի: Չգիտեմ, ո՞րտեղից էր նրա գլխում ցցվել այդ մեխը, թե ես պաշտպանում էի Դավիթ Ֆոմիչին և նրա նմաններին իրենց իժի ծնունդներով:

Հետաքրքրությունից մի օր վեր կացա և գնացի հիվանդանոց՝ Դավիթ Ֆոմիչին տեսնելու:

Կաթվածը տարել էր նրա մարմնի ամբողջ կեսը, գլխի ձախ մասից բռնած մինչև ձախ ոտը: Դեմքն այնպես էր ծռմռվել, որ հազիվ ճանաչեցի: Աջ աչքը փոքրացել, կուչ էր եկել, իսկ ձախն այնքան էր մեծացել ու այլանդակվել, որ ակամա զարզանդ զգացի: Այդ աչքը դուրս էր պրծել կոպերից մի ահագին անփայլ սպիտակուցով, որը կարծես պինդ խաշած ձվի սպիտակուց լիներ, և բոլորովին չէր շարժվում: Բերնի կեսը վերև էր թռել, կեսն իջել և կողքից լորձունք էր ծորում: Խոսել չէր կարողանում, բառերը դուրս էին գալիս կիսատ և աղավաղված, այնպես որ հասկանալ չէր լինում: Երբ հարցրի, թե ի՞նչ է ուզում, հազիվ կարողացավ արտասանել.

— Մը-մե... մը-մե...

Եվ որպեսզի հասկացնի, թե ինչ է ուզում ասել, աջ աչքը փակեց և ձեռքը վերև բարձրացրեց: Գլխի ընկա, որ ուզում էր ասել՝ «մեռնել-մեռնել»: Կարճ լռությունից հետո թոթովեց,

— Վը-ո... մը-ե... տը-տե... թը-ա...

Երկար ժամանակ չէի հասկանում այս թոթվանքը, և նա ահագին ջանք թափելուց հետո զանազան նշաններով կարողացավ հասկացնել, թե ուզում է ասել, «որ մեռնեմ, տերտերով թաղեցեք»:

— Դավիթ Ֆոմիչ, — ասացի, — որքան գիտեմ, դուք ազատամիտ մարդ էիք, տերտեր-մերտեր չէիք ճանաչում, թեև երեցփոխ էիք, այդ ի՞նչպես է, որ տերտերով եք ուզում թաղվել, այն էլ հիմա, երբ տերտերով, ժամ-պատարագով էլ ոչ ոք չի թաղվում:

Նրա կուչ եկած աջ աչքը հանկարծ բացվեց, մեջը կատաղության նման մի բան ցոլաց և կաթվածահար լեզուն անսպասելի կերպով արագ-արագ վրա տվեց,

— Բը-բո ջը-գը, բը-բը ջը-գը… — Այս կցկտուր բառերն էլ հասկացրեց, ուզում էր ասել՝ «բոլշևիկների ջգրու, բոլշևիկների ջգրու»:

Ինչո՞ւ էր կարծում, թե տերտերով որ թաղվի, բոլշևիկներից հանած կլինի իր ջիգրը, այդ էլ իր գաղտնիքը մնաց:

Այդ առաջին այցելությունից հետո չտեսա Դավիթ Ֆոմիչին: Թե քանի օր ապրեց, ե՞րբ մեռավ, ի՞նչպես և ո՞րտեղ թաղվեց — ոչ ոք չիմացավ:

Միայն մի օր ինչ-որ ժառանգներ հայտնվեցին, — երևի այն աղքատ ազգականները, որոնց Դավիթ Ֆոմիչը չէր կարողացել կամ, ավելի շուտ, չէր կամեցել բաժան-բաժան անել իր բնակարանը կահավորանքը, — եկան բաց անել տվին նրա սենյակի կնքած դուռը և ունեցած-չունեցածը տարան: Այդ ունեցած-չունեցածի մեջ էր և մի ահագին սնդուկ, մեջը արտասահմանից բերած ամենաընտիր կոստյումներ, որոնցից մի քանիսը դեռ ամենևին չէր էլ հագել:

Ո՜րքան ճիշտ է, չգիտեմ, միայն ասում էին և պնդում, թե այդ միևնույն սնդուկի մի առանձին ծածուկ անկյունում գտնվել էին կլորիկ ոսկիներ — տասնոցներ:

Ենթադրվում է, որ այդ «Մի հայ — մի ոսկի» ֆոնդի «ավելցուկը» պիտի լիներ, որ Դավիթ Ֆոմիչը պահել էր «սև օրվա» համար:

Այսպես ապրեց և այսպես մեռավ մեկը հին աշխարհի այն վերջին մոհիկաններից, որոնք, նոր կյանքի ասպարեզից դուրս նետված, ամեն օր միևնույն ժամերին հավաքվում էին հասարակաց այգու խուլ անկյունում՝ խոսելու անցած-գնացած օրերի և գուշակություններ անելու եկած ու գալիք օրերի մասին:

1930